արձանագրությունները. անշուշտ սխալ է Կ. վ. Շահնազարյանի հայտնած տարակույսը Դսեղում թողած Պռոշի արձանագրության հիման վրա, Զալալյանի ակներև սխալ ընթերցանության պատճառով*. 1247 թվին Իվանեն յերբեք կենդանի լինել կարող չեր, բայց նույնչափ սխալ է Իվանեի մահը 1227/9 թվին ընդունել։ Շիրակավանի յիրկու արձանագրության համեմատ Իվանեն կենդանի եր ՈՀԷ=1228 և ՈԶ(=1231) թվին**. կենդանի եր նաև ՈՁԱ (1232) թվին, յերբ Գետկա

ւոյն իւրոյ Աւագի եւ Շահնշահի, որդւոյ Զաքարէի», իսկ Կարսի քրիստոնյաները քաղաքի «ըրջները»։ Ուշադրության արժանի են հատկապես Կարսի արձանագրությունները, վորոնց նույնատիպ որինակը տալիս է Հովսեփ Որբելին*. դրանցից մեկի մեջ պարզ ասված է.

. . Թվիս ՈԶԳ (=1234) ի թագաւո/ր/ութեան Ռուսուդանա / յաթապակութենն Իւան / էի մեք Կարուց քրիստոնէ / քս շինեցաք



Որմնկար Աստվածածնի այրում. Պռոշ իշխան ընտանիքով? **Պատկեր 31.**

վանքում «յիշխանութիւն իշխանաց իշխանին աթաբակ Իւանէի եւ որդւոյ նորա Աւագի» գրվեց Հավաղբոտկի ավետարանը (Հավել. Բ. 3)։ Ստեփանոս գրիչն ապրում եր Գետկա վանքում, Իվանեի իշխանության մեջ, չեր կարող անտեղյակ լինել կամ չարտահայտել վոր և է կերպով, յեթե տարիներ առաջ վախճանած լիներ Իվանեն։ Վերջին անգամ յիշվում է Իվանեն արձանագրությունների մեջ ՈԶԲ և ՈԶԳ (1233, 1234) թվերին, յերբ Հաղբատի առաջնորդ տեր «Յաւհաննէս» շինեց կայենո բերդը Խորազմների արշավանքի հետևանքով, «հրամանաւ քեռւոյն իմոյ Իւանէի եւ որդ-

զբրջներս ի / հալալ արդեանց մերոց։

Այս թվականներն ավելի հարմար են գալիս Գանձակեցու տեղեկության, վոր Իվանեի մահը նշանակում է թաթարների կարգավորյալ արշավանքից (1235/6 թ) «յառաջ քան զսակաւ ժամանակս», բայց Գանձակի ավերումից (1232 թ.) հետո**։ Այսպիսով Իվանեի մահը և Ավագի իշխանության առաջին տարին պետք է նշա-

* Օրբ. Բ. 334. յուր հրատարակության. Զալ. Ա. 112։ Ուղիղ ընթերցվածը տ. Հավել. Ա. 13։
* Շիրաք. Օ. Վիմական Տարեգիր. 74։

* Христ. Восток. 1917. 148—149։ Համ. Սարգսյան. 104. Ալիշան. Այր. 85։ Հաղբատի Հովհաննես յեպիսկոպոսի արձանագրությունը տ. Զալ. Ա. 81. (սխալներով) և Երզնկեան. Հնախոսական Տեղագրութիւն Հաղբատայ. Վաղարշ. 1886. 71.։ Գրի է առնված և լուսանկարված մեր կողմից։
** Գանձակեցի. 224։